№ 169 Սեպտեմբերի 11 (23) 1881 Սեպտեմբերի 11 (23) № 169

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլ. կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ
Օտարաքաղաքացիք գրվում են այսպէս
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՄՇԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ՝ Նամակ Ս. Պետերբուրգից՝ Նամակ Քութայիսից՝ Նամակ Խմբագրին՝ Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ՝ Աւստրո-Ունգարիա՝ Ֆրանսիա՝ Անգլիա՝ Գամբէտտայի ճառը՝ Նամակ Թիւրքիայից՝ Արտաքին լուրեր:— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ՝ Մի պատասխան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

4 սեպտեմբերի

Յայտնի փաստ է, որ Անդրկովկասում վաճառը օրըստօրէ թմրանում է. գիշակեր տնտեսութիւնը հեռացրել է և այժմ էլ անդուլ և անդադար շարունակում է հեռացնելու անտառները մարդաբնակ կենտրոններից: Աւելցնենք սրա վրա ևս այն, որ Կովկասը չունի բնատուր ճանապարհներ, այն ժամանակ դժուար չէ եզրակացնել թէ այդպիսի ձախողակ միջոցները ինչ տեսակ խոչընդոտներ պիտի դնէին տեղային տնտեսական զարգացման դէմ, քանի որ տեսնում ենք առանց ջրի ու կրակի գլուխ չէ գալի ոչ մի արուեստական գործողութիւն, այս խօսքի լայն մտքով:

Եթէ նայենք Անդրկովկասեան երկաթուղիներին այս տեսակէտից, մենք ակնյայտնի կը տեսնենք այն բարեփոխիչ ազդեցութիւնները, որոնց պիտի ունենան նրանք այդ երկրի տնտեսական մակերևոյթը բարձրացնելու խնդրումը: Հեռի չէ այն ժամանակը, երբ ամբողջ Անդրկովկասը կը հիւսւի երկաթուղիների ցանցով. Փօթին, Քութայիսը ու Թիֆլիսը կապված են արդէն միմեանց հետ այդ կատարելագործված ճանապարհով: Բագուն Թիֆլիսի հետ կապվելու վրա է, Բագուի գծի կառուցումը ջանքով առաջ է գնում: Սրանից յետոյ հերթը կը հասնի Ղարսին ու Երևանին: Նաւթային ճիւղը պատրաստ է: Տկվիբուլեան քարէ ածխային երկաթուղու բաժնի հետազօտութիւնները քննադատվում են այս օրերումս ճանապարհային հաղորդակցութեան նախարարութեանում և՝ այսպէս թէ այնպէս՝ մօտիկ ապագայում կիրագործվի... Երբ կը սկսվի Բագու-Թիֆլիսեան երկաթուղու երթևեկութիւնը, Անդրկովկասի արևելեան կողմը բոլորովին ապահոված կը լինի էժան վառելիքով Նաւթի անսպառելի պահեստներից, իսկ փոքր Կովկասին և արևմտեան մասին կը մնայ ևս ստանալու Տկվիբուլի քարէ ածուխը, որը արագօրէն կը տարածվի Սև ծովից սկսած մինչև Թիֆլիս և գուցէ Գանձակ:

Այսպէս ահա երբ էժան վառելիքի փոխադրական դիւրութիւնները ձեռք կը գան, շատ չի անցնի և կը ջրվի Անդրկովկասը, թէ արտասահմանում և թէ բուն Ռուսաստանում կազմված դրամներով կերպարանափոխել այդ երկրի բարիքները կամ վաճառահանել դրա նոյն իսկ նախնական մթերքները, որոնք ամփոփված են մինչև այժմ հողի տակ,— ահա այն գործերը, որին պիտի ծառայեն այս դրամները: Ես ձեզ հաղորդում եմ այս, որպէս ճշմարիտ լուր, որ հիմնած է մէկ ձեռնհաս գործիչի խօսակցութեան վրա ինձ հետ... Այո, շուտով որպէս մի մեծ գործարան կը ներկայանայ մեր Անդրկովկասը:

Ահա և նամակիս նպատակը՝

Այս մեծ գործարանում ինչ դեր պիտի խաղայ հայը: Ա՞յն—ինչ որ խաղաց և խաղում է Նաւթի ասպարիզում: Ա՞յն, ինչ որ խաղաց Հնդկաստանի երջանկայիշատակ վաճառականութեանում, կամ թէ վաղամեռիկ Նոր-Նախիջևանի առեւտրում... Բայց սրանք սոսկալի դերեր են: Մի քանի անհատների կոյր զիւրային ժողոված հարստութիւնները չեն մոլորեցնի մեզ և չեն կարող նսեմացնել այս անպարոյն հարցերը. այս տեսակ հարստութիւնները նոյնպէս և կոյր զիւրային կը ստանան կը գնան... Եթէ որոնէք, ապացոյցներ շատ կը գտնէք: Ցոյց տուէք մեզ, այս բոլոր մատնացոյց արած տեղերում, մի գործ անգամ, որի սկզբնապատճառը լինէր հայը և որ այս գործը ունենար իր ապագան—եւրոպական մտքով: Գոնեա մենք չը գիտենք: Բայց մի բան քաջ ըմբռնել ենք և ահա այս է, հայի փարթամ գաղափարը իր ձեռնհասութեան վրա վաճառականութեան մէջ, նրա խելացար կարծիքը իր արուեստագիտութեան մէջ, որոնք դառել են և մասն փաթթանք Օրմանեանների նման հրապարակախօսների և ամեն այն վայրահաչ եւանդրդ կրից գերինների համար, որոնք միաձայն ու միահամուռ մոլիփոր խոժառուժի գեհենիկ աղաղակն են բարձրացրել թէ Կ. Պոլսի և թէ Թիֆլիսի-մէկ լրագիրներում: Ինչեր, ինչեր միայն չէ գրվում «Մշակի» և նրա աշխատակցի, մեր բարեկամ Նիկողոսեանի վրա, որոնք ունեն յանդգնութիւն չը կուրանալ ոչ հայի վաճառականութենից և ոչ նրա արուեստից... Դառնանք կրկին կեանքին. Բագու—Բալախանի երկաթուղու երթևեկութիւնը ամեն տարի վնաս է տալի նրա ըն-չ կերութեան, որը, գիտէք, ի մէջի այլոց ին պատճառ է առաջ բերում՝— հարկաւոր և պիտանի բանուորներ և արուեստաւորներ չը կան այդ երկրում և նա (ընկերութիւնը) հարկադրված է բերել տալ սրանց Ռուսաստանից և ի հարկէ պարտաւոր է նշանակել բարձր ռոճիկներ:

«Հասկացողին—մէկ, չը հասկացողին հազար և մէկ», կարծեմ այսպէս է ասում առածը և այս պատճառով ծալում ենք ուրիշ օրինակները, որ երկարաբանութիւն չը լինի... Կեանքը ակներև ցոյց է տալի որ մեր ոչ արհեստաւորները և ոչ վաճառականները չեն կարող հաճեցնել այդ երկրում նոր ծագած անհրաժեշտ պիտոյքներին: Այո, հայը կարող է բաղդաւորապէս մրցել միայն, որպէս վաճառականութեանում, նոյնպէս և արուեստում քրդի, թաճկի, եզիդի և այլ երկու ոտանի կենդանիների հետ և ոչ այժմեան մարդու հետ, որը վաղը պիտի այցելէ նրան:

Այս է «Մշակի» և Նիկողոսեանի դաւանութիւնները, բայց սրանց լսելու և հասկանալու տեղ՝ «Գարուն է եկել նախշուն թևերով» ենք երգում ու երգել տալիս մեր երեխանց, մինչդեռ գարունը շատ հեռի է, մինչդեռ ձմեռ է, ցուրտ է, կրակ ու հաց է մեզ պակաս:

Գաս. Եղազարեան

ՆԱՄԱԿ ՔՈՒԹԱՅԻՍԻՑ

Սեպտեմբերի 3-ին

Վաղուց է ինչ որ լսում եմ շատերի բերանից, որ մի քանի մարդասէր անձինք մտադիր են մի փոքրիկ ուսումնարան բանալ Ջխար գիւղում: Ջխար գիւղը գտնվում է Քութայիսից 28 վերստ հեռաւորութեամբ. բնակիչների մեծամասնութիւնը հայեր են (մօտ 60 տուն) և պարապում են վա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՊԱՏԱՍԽԱՆ

Բոլոր զարգացած մարդկանց համար հասկանալի պարզ ճշմարտութիւն է, որ գրել ու կարդալ իմանալը ինքն ըստ ինքեան մի նպատակ չէ, այլ գրել ու կարդալ սովորում ենք և սովորեցնում, որպէս զի այդ միջոցով գիտութիւններ ձեռք բերենք այնպիսի իրերի, որոնք կամ ժամանակով կամ տարածութեան միջոցով մեզ անմիջապէս անհասանելի են: Մեր այժմեան ազգային դպրոցները նախ և առաջ Տաճկաստանում և ապա Ռուսաստանում իրանց համբակներին հայերէն գրել ու կարդալ սովորեցնելով ինչ գիտութիւններ են աւանդում աշակերտին: Անհամեմատ քիչ, կամ բնաւ ոչինչ:

Ես այս խիստ խօսքերով հրաւիրում եմ բոլոր հայ դաստիարակներին, ուսուցիչներին և մանաւանդ մեծ. պ. Բէկ-Նազարեանին անաչառ քննել իմ առարկութիւնը: Օրինակի աղագաւ Գերմանիայի ժողովրդական դպրոցը (volksschule) ոչ թէ միայն իր աշակերտին սովորեցնում է մի քանի տեղեկութիւններ, որ հասարակ արհեստաւորին անհրաժեշտ պէտք են, այլ գրել և կարդալը նրա համար է սովորեցնում նրան, որ նա դպրոցից դուրս գալուց յետոյ կարողանայ ժողովրդական հասկանալի ոճով գրված յօդուածներ և գրքեր կամ լրագիրներ կարդալ և նրանցից կամ օգտակար գիտութիւններ քաղել կամ, եթէ լոկ զբօսուցիչ գրուածքներ են, նրանց կարդալովը զուարճանալ: Եւ այդպէս Գերմանիայում, Գաղղիայում, Անգլիայում և նոյն իսկ մեր Ռուսիայում ժողովրդական դպրոցը մի կատարեալ ամբողջութիւն լինելով և իր որոշ նպատակն ունենալով՝ ազգի հասարակ անդամին մասնակից է անում ազգային գրականութիւնը. և աշակերտը իր դպրոցումը գրել ու կարդալը սովորել է, որ կարողանայ երկրագործութեան, հիւանդութեան, դարբնութեան, նոյնպէս և օդային փոփոխութեանց, պատմութեան և քաղաքականութեան վերաբերեալ գրքեր ու գրուածքներ կարդալ և նորանցից չիմացած բաներն իմանալ:

Եւ այս կերպով Եւրոպայում ժողովրդական դպրոցը մի առու է, որ երեխայն տանում հասցնում է ազգային գրականութեան ծովին, ուր պատանին, օրիորդը, մարդը և կինը՝ ինչ բանով էլ որ ուզենային պարապել՝ միշտ պատրաստ գրքեր ու գրուածքներ կարող են ունենալ կարդալու համար: Իսկ մեր ազգային դպրոցը ինչու համար է սովորեցնում հայերէն գրել և կարդալը. մեր երեխան դպրոցից դուրս գալուց յետոյ մի բան չէ գտնում կարդալու, որ նորանից կամ օգուտ և խորհուրդ ու խրատ ստանայ, կամ զուարճանայ: Մեր դպրոցից դուրս եկող հայ պատանին կամ օրիորդը ինչ գիրք կարող է կարդալ, ինչ ունենք. դերձակութեան, հիւանդութեան, և ուրիշ արհեստների և գիտութիւնների վերաբերեալ ինչ պարբերական հրատարակութիւններ կամ թարգմանութիւններ և հեղինակութիւններ ունենք, որ նրանք իրանց գրել ու կարդալը նրանց վրա գործածելով օգուտ քաղէին: Ուրեմն որովհետև մեր գրականութիւնը շատ տկար է, ուստի և մեր զաւակունքը շատ սակաւ կարող են շահվել:

Գուցէ մէկը իմ այս խօսքերից այն հետևանքը հանէ թէ ուրեմն գրել կարդալ սովորեցնելը աւելորդ է, ուրեմն և հայ դպրոցները աւելորդ են: Բնաւ: Այդ իմ ասածից ուրիշ բան է հետևում, այսինքն, որ ոչ թէ մեր դպրոցները դադարեցնենք, այլ մեր դաստիարակութեան եղանակը և նպատակը փոխենք և ոչ թէ կուրօրէն և անգիտակցաբար Եւրոպայի ազգերի դպրոցների ընթացքին և պրօգրամին հետևենք ու սխալներ գործենք առանց մեր մասնաւոր պէտքերը ի նկատի առնելու:

Մեր դաստիարակները և ուսուցիչները պէտք է որոշ և պարզ իմանան ազգի այժմեան պիտոյքը և դաստիարակութեան եղանակն ու նպատակը պէտք է յարմարեցնեն նրան: Նրանք պէտք է իմանան որ մեր ժողովրդական դպրոցը առ այժմ չէ կարող մեր զաւակներին տանել հասցնել մի ազգային լայնածաւալ գրականութեան: Վասնորոյ նրանք պէտք է համոզվեն, որ հայ զաւակը չէ ունենալու իր կարդալ իմանալուց մի մեծ օգուտ, և այդ պատճառով նրանք պէտք է այն թանգ ժամանակը, որ հայ մանկտին անց է կացնում ժողովրդական դպրոցում ըստ կարելոյն օգտակար անեն նրա համար:

Մեր ժողովրդական դպրոցները գիւղերում և քաղաքներում փոխանակ գրականական լինելու պէտք է լինեն իրական, նկատողական և պատմական, այսինքն փոխանակ այնչափ թուղթ ու թանաք և գրքեր փչացնելու և քերականական ու ուրիշ կանոններ սերտել տալու, ուսուցիչները պէտք է աւելի խօսեն, պատմեն, իրողութիւններ և անցքեր ներկայացնեն դնեն աշակերտների աչքի առաջ, նրանց ծանօթացնեն անցեալի և ներկայի հետ, մեր ազգի և օտար ազգերի հետ. նկատողական եղանակով աշակերտներին հասկացնեն բնութեան երևոյթները և օրէնքները, նրանց սովորեցնեն հայերէն մաքուր խօսել, ուղիղ դատել, քննել, խորհրդածել: Քանի որ աշակերտը դպրոցումն է, ուսուցիչները պէտք է կարելի եղածին չափ նրանց միտքը զարգացնեն, լեզուն բանան, ճոխացնեն, քննութիւնը և մտածողութիւնը սրեն, յիշողութեան շտեմարանը լցնեն այս և այլ պիտանի իրերի գիտութիւններովը: Թող ուսուցիչը իմանայ, որ նրա աշակերտը իր կեանքումը այլ ևս երբէք սրանից լաւ պատեհութիւն չէ ունենալու բան սովորելու. ուրեմն թող նրան լաւ բացատրէ թէ ինչ է անձրևը, կարկուտը, ձիւնը, ինչ է ծիածանը, կայծակը և որոտումը. ինչից է լինում երկրաշարժը. ինչ է լուսանկարչութիւնը. ինչ է հեռագրութիւնը. ինչպէս է շինված երկաթուղին, թէ ով են ֆրանսիացիք, անգլիացիք, գերմանացիք. թէ նրանք թւով, գիտութիւնով և զօրութիւնով ինչ են. նրանց կեանքը, վարքն ու բարքը նկարագրել նրանց երեխայութեան առաջ: Եւ ուրիշ շատ այսպիսի իրական բաներ պատմելով, զրուցելով աւանդել աշակերտների յիշողութեանը, նրանց աշխարհի այժմեան վիճակից ստոյգ տեղեկութիւններ տալ, մի չափաւոր գրել ու կարդալու հմտութեամբը հանդերձ, թէև այդ կարդալը լինէր մի քիչ կցկըցալով և գրելն էլ մի քանի տառասխալներով:

Մեծ. պ. Բէկ-Նազարեան, ահա այսպիսի բէալական մի եղանակ է, որ ուզում ենք և համոզված ենք որ հարկաւոր է մեր ազգային ժողովրդական դպրոցներին, և ոչ թէ ասում ենք իւրաքանչիւր գիւղում պէտք է մի բազմարուեստանոց հիմնել. ի հարկէ եթէ քաղաքներում և գիւղերում կարելի կը լինէր դպրոցի հետ մի փոքրիկ դարբնանոց և մի հիւանդարան ունենալ, առաւել լաւ կը լինէր, բայց անհրաժեշտ հարկաւոր չէ:

Իսկ այն կէտի նկատմամբ, թէ ես ազգային դպրոցների այժմեան անբաւարար վիճակը քննադատելով և նրանց թերութիւնքը երևան հանելով կամայ կամ ակամայ վնասում լինեմ նրանց վարկին, դա ճշմարիտ չէ: Ես միայն այս չափն եմ ասում, որ դուք ազգային դպրոցները այնքան մաքուր պահեցէք, որ ոչ ոք չը կարողանայ մի եական արատ գտնել, և յետոյ թողէք ձեզ քննադատեն որքան էլ որ ուզում են: Իսկ եթէ ձեզ արդարութեամբ քննում են և թերութիւնները հրապարակ բերում, այն ժամանակ մի ասէք թէ ձեր և ձեր դպրոցների վարկը վայր են գցում, այլ աշխատեցէք ձեր պակասը լրացնելու և այն ժամանակ ձեր վարկը, որը չէ թէ կրիտիկան վայր գցեց, այլ արդէն վայր ընկած էր և նա ցոյց տուաւ, ինքն ըստ ինքեան վեր կը բարձրանայ: Բայց ի հարկէ ուսուցիչների պատիւը կրնկնի, եթէ նրանք չուզեն ուղղել իրանց ուսուցչական և իրանց դպրոցների պակասութիւնները, այն ժամանակը յանցանքը քննադատողինը չէ:

Ա. Ա.